

Փաստաթղթեր Խարբերդի նահանգի մասին  
(1919-1922թթ.)

Խարբերդի (1867-ից՝ Մամուրեթ ու Ազիզի) նահանգը օսմանյան վարչական միավոր է Արևմտյան Հայաստանի տարածքում: Այն կազմավորվել է 1847թ.՝ Դիարբեքիի, Սեբաստիայի և Մարաշի էլայեթներից առանձնացված շրջաններից: Կազմավորումը վերջնական տեսք է ստացել 1888-ին, երբ նահանգը ներառել է նաև Դերսիմը: Մինչև 1867թ. վարչական կենտրոնը Խարբերդն էր, այնուհետև՝ Մեզիրեն: XX դարի սկզբին այն ուներ 37.800 քառ.կմ. տարածություն և բաղկացած էր 3 գավառից՝ Դերսիմ, Մամուրեթ ու Ազիզ և Մալաթիա:

Խարբերդ քաղաքում տպագրվում էին «Եփրատ» հանդեսն ու մի շարք այլ թերթեր: Քաղաքը հայտնի էր Բարիկյանների գործիքաշինական, Գրիգոր և Սարգիս Քյուրքճյանների մետաքսի գործարաններով: Մեզիրեում էին գրտնվում Ֆրանսիայի, Պարսկաստանի և ԱՄՆ-ի հյուպատոսությունները, Ֆաբրիկաթորյանների մետաքսի գործարան, ամերիկյան հիվանդանոցը, ֆրանսիական լիցեյը, գերմանական վարժարանը՝ որբերի համար, ինչպես նաև հայերի Կեդրոնական վարժարան ու Արարատյան դպրոցը, ս.Սարգիսն ու ս. Աստվածածինը, բողոքական ու հայ կաթոլիկների եկեղեցիներ: Խարբերդի առաքելական չորս, ասորիների ս.Աստվածամայրը, բողոքական եկեղեցին ու Վարի թաղի ժողովարանը, Աստվածաբանական ճեմարանը, Ազգային կեդրոնական վարժարանը, Հռիփսիմեանց օրիորդաց վարժարանը, այնուհետև՝ հարակից տեղակայված Սմբատյան ընկերության արական և օրիորդաց վարժարանները, Եփրատ քուլեջը<sup>1</sup>, գիշերօթիկներն ու 20 որբանոցները ամբողջացնում էին պատկերը: 1914 թվականին տեղի ամերիկյան առաքելությունում<sup>2</sup> աշխատում էր 72 մարդ. նրանք տարահանվել էին 1917թ. մայիսի 17-ին, դրանից հետո, երբ Միացյալ Նահանգները մտավ Համաշխարհային պատերազմի մեջ ու խզել իր հարաբերությունները Թուրքիայի հետ: Պատերազմից հետո քարոզիչների մի մասը, պայմանագիր կնքելով Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի (ՄԱԱՕԿ) հետ, 1919թ. ապրիլին վերադարձան ծառայության նախկին վայր: Այդ խմբում էին Հենրի Ռիզզը, Ռուբ Պարմելին, Իզաբել Հարլին, Տեսի Ատկինսոնը, Մարկ Վարդը. մարդիկ, որոնք մինչև 1922թ. ամառը շարունակեցին օգնել հայերին:

ՀՀ պատվիրակության կողմից, 1919թ. ապրիլի 6-ին, Փարիզի վեհա-

<sup>1</sup> Տես. Վահե Հայկ, Խարբերդ եւ անոր Ոսկեդեն դաշտը: Յուշամատեան պատմական, մշակութային եւ ազգագրական: Նիւ Եորք, 1959; Henry Harrison Riggs, Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoot, 1915-1917. Ann Arbor, MI; Gomidas Institute, 1997; Armenian Tsopk/Kharpert, ed.by R.G.Hovannisian. UCLA Armenian History and Culture Series, Historic Armenian Cities and Provinces, 3. Costa Meza, Ca, Mazda Publishers, 2002:

<sup>2</sup> Բողոքական քարոզիչները ԱՄՆ-ում ստեղծել են Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների ամերիկյան վարչություն, որը Խարբերդում գործում էր 1855թ.: Նա ունեցել է տարածված կառուցվածքն և ընդգրկում էր նահանգի 63 դպրոց՝ մանկապարտեզներից մինչև քուլեջ, միաձույլ համակարգով, եկեղեցիներ ու մամուլ, հիվանդանոցներ, որբանոցներ, արիեստանոցներ:

ժողովի քարտուղարությանն ուղարկած «Հայաստանի բնակչությունը» հուշագրում Ա.Ահարոնյանը նշում էր, որ 37 հազար քառ. կմ. տարածքով Խարբերդի նահանգում Եղեռնից առաջ բնակվում էր 306 հազար մարդ, որոնցից 115 հազարը հայեր էին: Նրանք ապրում էին Խարբերդ քաղաքում (20 հազար), Մալաթիայում (5 հազար), Արաբկիրում (հայ կաթոլիկների տեղական կենտրոնում՝ 5 հազար), Ակնում (20 բանկերի և 42 արհեստանոցների քաղաքում՝ 5 հազար), Ոսկեղեն դաշտի և այլ շրջանների 360 գյուղերում<sup>3</sup>: Հայերի թվաքանակը՝ ըստ Կ.Պոլսի պատրիարքարանի տվյալների, մոտ 163 հազար էր: Նրանք ունեին 73 դպրոց՝ 5780 աշակերտների համար<sup>4</sup>:

1919թ. մայիս-հունիս ամիսներին Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի նախագահ Ջ.Լ.Բարտոնը այցելում է տարածաշրջան ու գրում է, որ հարկավոր է անհապաղ դիմել կտրուկ քայլերի և Ազգերի Լիգայի հովանու // -75 ներքո ստեղծել անկախ հայկական պետության<sup>1</sup>:

1919թ. սեպտեմբերի 17-ին Խարբերդ ժամանեց Ջ.Հարբորդի առաքելությունը: Հանդիպելով ամերիկացի քարոչիդիներին, գեներալը հարուստ տեղեկությունները ստացավ ամբողջ նահանգի մասին: Ըստ այդ տեղեկությունների, նահանգում մնացել էին 25 հազար տեղացի հայ քրիստոնյաներ և մոտավորապես նույնքան էլ բռնի մահմեդականացված հայ: Խարբերդ էին վերադառնում նաև ցեղասպանությունից հրաշքով փրկվածները: Դատելով Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի կողմից Խարբերդում գաղթականներին հատկացված գումարներից, կարելի է ասել, որ 1919թ. սեպտեմբերից մինչև 1920թ. ընկած ժամանակահատվածում քաղաքը՝ գաղթականների թվով զիջում էր միայն Կ.Պոլսին<sup>2</sup>:

Հրապարակվող փաստաթղթերը լուսաբանում են Խարբերդի նահանգում 1920թ. հունվարից մինչև 1922թ. մայիս ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրադարձությունները: Մեր կողմից հատկապես արժեվորվում է N° 2 փաստաթուղթը, որը մանրակրկիտ ներկայացնում է նահանգի վերոնշյալ ժամանակաշրջանի վիճակը, առաջարկելով նրան ընդգրկել ՀՀ սահմաններում: Վավերաթղթում առկա բազմակետերը կիրառել է սույն հրապարակման հեղինակը՝ վկայություններն ավելի սեղմ դարձնելու նպատակով: Բաց թողած հատվածները չեն խաթարում գրությունների բովանդակությունը:

Հրապարակվող փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում՝ որպես միկրոժապավենների հավաքածու (համար 1) և ֆոնդ 430-ում:

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ.200, ց.1, գ.193, մ.5, ք.377:

<sup>4</sup> ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.557, հ.1, մ.3, ք.192, 198:

<sup>1</sup> United States National Archives, Washington D.C., Record Group 59 Records of the Department of State, class 860J.01/document 9; T1192, Roll 1; Records of the Department of State relating to internal affairs of Armenia, 1910-1929. Microfilm publications, Wash., the NA, NA and Records Service, General Services Administration, 1975, ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու, հ.1 (այսուհետև ՀԱԱ, ՄՀ):

<sup>2</sup> Նույն տեղում, T1192, Roll 7, ՀԱԱ, ՄՀ, հ.36:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՎԵՆ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆԻ  
ՅՈՒՇԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ Գ.ՌԱՎՆԴԱԼԻՆ՝  
ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

28 հուլիս 1919թ.-ից ոչ ուշ, Կոստանդնուպոլիս

«Մ. և Ա.<sup>1</sup> կոմիտեի կողմից նշանակվելուց ի վեր Մամուրեթ ու Ազիզի կուսակալ Ալի Սեիդի բեյը երբևիցե չի փոխվել: Նա իր ամբողջ ժամանակն անցկացնում է հարևան բեյերի հետ կերուխումի մեջ: Վերջերս անցկացված մեկ ճաշկերույթի ժամանակ հրավիրվել էր ֆրանսահպատակ օրիորդ Գամային և եպիսկոպոս Իսրայելյանին<sup>2</sup> սպանողը՝ Իզոլլուի<sup>3</sup> քուրդ Ղազի Կայան, Մ. և Ա. կոմիտեի կենացը խմելուց հետո Ալի Սեիդի բեյը հասկացրել էր Ղազի Կայային<sup>4</sup>, որ նրան, անշուշտ, ավելի լավ է թողնել Խարբերդը<sup>5</sup>, քանի որ Կոստանդնուպոլսից շուտով նրան կալանելու հրաման են ստանալու:

Հետևաբար, Ղազի Կայան վաճառել էր Խարբերդի իր տունը՝ կատարած թա-//76 լանով հանդերձ, և անհետացել: Քիչ անց կուսակալի՝ «Մալթա կատարած տեսչական ուղևորության» հետ կապված բացակայության ժամանակ լսեցինք, որ Ղազի Կայան վաճառել էր նաև Իզոլլուի իր ունեցվածքն ու «հեռացել հասարակական կյանքից»:

Մինչ կուսակալը տեսչական ուղևորության մեջ էր, Կոստանդնուպոլսից հրամաններ եկան, որոնք պատվիրում էին ձերբակալել վերոհիշյալ Ղազի Կայային ու Բունլունթլու Ղալիլին: Վերջինս, ինչպես կարգն է, կալանվեց, որոշ ժամանակ բանտարկված մնաց և ապրիլի 23-ին պահպանությանը ուղարկվեց Կ.Պոլիս: Ինչ վերաբերում է քուրդ պարագլխին, նրան անհնարին էր բռնել, ու թեև ասվել է, որ նրա հետևից ժանդարմներ են ուղարկվել, այնուամենայնիվ, այդ պնդումը պարզապես սուտ ենք համարում, քանի որ Ղազի Կայային տեսել են նրա գյուղում՝ բացարձակ անվտանգ վիճակում:

Մինչ այժմ ազատության մեջ են այն թուրքերն ու քրդերը, որոնք Խարբերդի մերձակայքում մասնակցել են արտաքսումներին ու կոտորածներին: Նրանց թվում են հետևյալ անձինք. բանտապահ Հասան էֆենդին, «իսթիհաթի<sup>6</sup>» նախկին անդամ Սուլեյման էֆենդին՝ որն անցյալ նոյեմբերին մեկնել է Քյոթահիա (երկուսն էլ պատկանում էին Մեզիրեի Մ. և Ա. ակումբին), Խարբերդի տեղահանումների ժամանակ Մ. և Ա. ակումբի նախագահ Մեարիֆ Ֆերիդ բեյը, «ոստիկանության մյուդիր<sup>7</sup>» Ռեշադ բեյը (այդ երկուսն այժմ անհետացած են), Մ. և Ա. ակումբի տեսուչ Նազըմ բեյը, որը տեղահանության ժամանակ հատուկ ուղարկվել էր այստեղ, տեղահանության հանձնաժողովի նախագահ Մեքտուբջի Չեֆիկ բեյը, որը հետագայում սևծովյան էրեզլու<sup>8</sup> կայնական էր, նախկին դեֆթերդար<sup>9</sup> Ջենալ բեյը, որն ակնեղենով, ոսկով և արծաթով ճամպուրկներ ուղարկեց իր կնոջը Ղալեայ, Մալաթիայից քուրդ պարագլուխ Ղազի Բեքիր աղան, որը պատասխանատու էր նշանակված երկրի խորքում բազմաթիվ մեծ քաղաքներից աքսորյալների համար և անթիվ եղեռնագործություններ է կատարել Եփրատի ափին՝ Մալաթիայի և Սամոսատի միջև, հիմնկվա «ոստիկանության մյուդիր» Հուլուսի բեյը, որը տեղահանությունների ժա-

մանակ նույն պաշտոնն էր վարում էրզրումում և կազմակերպել էր Սանասարա կիրճի կոտորածները:

Ապրիլի 30-ին կուսակալի տանը տված ճաշկերույթում նույն Հուլուսի բեյը, որին վերը հիշատակել ենք, խմելով կուսակալի կենացը, ասել է, որ Ալի Սեիդի բեյի պաշտոնում մնալը բխում է բոլոր ներկա բեյ-էֆենդիների շահերից, քանի որ, ըստ նրա, եթե չլիներ այդ անձը, ճաշը վայելողներից շատերը հիմա կտառապեին բանտում:

Որպես եզրակացություն. քանի դեռ կուսակալն ու նրա դեֆտերդար թահսինը այստեղ են մնում, պայմանների բարելավման հույս չի կարող լինել, և մենք արդեն քննարկել ենք այս հարցը դր.Բարտոնի հետ»:

Հայաստանի ազգային արխիվ, միկրոժապավենների հավաքածու, հ.1: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

## N° 2

ԱՄՆ-Ի ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՄԵՐՁԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ Հ.ՂՈՒԱՅԹԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ «ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՐՑԸ» ՏԵՂԵԿԱՆՔՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ Բ.ԿՈԼԲԻՆՆՆԱՐԱՆԳԸ ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ<sup>10</sup>

11 նոյեմբերի 1920թ., Վաշինգտոն

«...Այս հարցին դրությանը վերաբերող ամենակարևոր փաստաթղթերը հետևյալն են.

I. Վաշինգտոնում Հայաստանի<sup>11</sup> Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ դր.Գ.Փաստրմաճյանի 1920թ. հունվարի 15-ի հուշագիրը, ուղղված պե-/-77 տական քարտուղարին (գրանցում հ. 860J.-01/178)<sup>12</sup>, համաձայն որի պահանջատիրության մեջ է ներառվում նաև Դերսիմի գավառն ու Խարբերդը:

II. 1920թ. մայիսի 1-ի (գրանցում հ. 860J.01/247) հուշագիրը՝ նույն անձին...

III. Փարիզում գործող և նախկին Օսմանյան կայսրության հայերի շահերը ներկայացնող Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի ու Խաղաղության վեհաժողովի Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյանի 1920թ. մայիսի 4-ի հեռագիրը ուղղված պետական քարտուղարին (860J.01/251)՝ Խարբերդի գավառի պահանջով:

IV. Փարիզի ամերիկյան դեսպանատնից 1920թ. օգոստոսի 20-ին պետքարտուղարին հասցեագրված ճեպագիրը (860J.01/336), որը ԱՄՆ-ի նախագահին է փոխանցում Պողոս Նուբար փաշայի և Ա.Ահարոնյանի՝ սահմանային հարցի վերաբերյալ նամակը: Փարիզում հայկական պատվիրակության ղեկավարները նախագահին խնդրում են Հայաստանի կազմում ներառել Խարբերդի տարածքը (19-րդ դարի առաջին կեսին գոյություն ունեցած էրզրումի էյալեթի արևմտյան ու հարավային սահմանները, մասնավորապես՝ Խարբերդի քաղաքն ու դաշտը), ինչպես նաև ճորոխի ողջ հովիտը՝ մինչև Բաթումի մոտ գտնվող նրա գետաբերանը<sup>13</sup>: Փոխարենը, հայկական կողմը պատրաստ էր հրաժարվել իրեն հատկացվելիք չորս նահանգների որոշ մասերից, ինչպես օրինակ՝ Տրապիզոնի

նահանգի արևմտյան մասից:

V. Միացյալ Նահանգներին ուղղված՝ հայկական ռազմական առաքելության պետ, գեներալ-մայոր Յ.Բագրատունու հուշագիրը (760J.6175/15), որը պաշտոնատար հայկական դեսպանորդը 1920թ. մայիսի 22-ին ներկայացրել է պետական քարտուղարին ու առաջարկել [Յայաստանին] միացնել Դերսիմի գավառն ու Խարբերդը, ինչպես նաև Արղանայի գավառի այն մասը, որը հատում է վերին Եփրատի (Մուրադ գետի) հովիտը:

VI. 1920թ. մայիսի 5-ի՝ պետական քարտուղարին ուղղված՝ Յայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ պատվարժան Ջեյմս Ու.Ջերարդի հուշագիրը (860J.01/266), որը պահանջում է Յայաստանին միացնել «Եփրատ գետից արևելք գտնվող բոլոր հողերը»:

VII. Յայաստանում գտնվող Խարբերդի կրթական ու նպաստամատույց ընկերությունների միության պատվիրակության [ԱՄՆ-ի] նախագահին ու պետքարտուղարին 1920թ. հունիսի 21-ին ներկայացված հուշագիր (860J.01/311), համաձայն որի, պատվիրակությունը առաջարկում է Խարբերդի նահանգը, հայկական այլ նահանգների հետ միասին, ընդգրկել ՀՀ կազմում:

VIII. Խարբերդի (Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների ամերիկյան վարչության) Եփրատ քուլեջի նախագահ և Նյու Յորքում Յայաստան-Ամերիկա ընկերության ժամանակավոր քարտուղար ու գանձապահ հայր Էռնստ Վ.Ռիզզի «Դիտողությունները Յայաստանի սահմանների վերաբերյալ» [տեղեկանքը] (860J.01/313), որը 1920-ի հունիսի 24-ին ներկայացվել է նախագահին ու պետքարտուղարին: ՊՆ. Ռիզզը առաջարկում է նախագահին Սևրի պայմանագրի ստորագրողներին առաջարկել Յայաստանի կազմում ընդգրկել Խարբերդը, ինչպես նաև Սեբաստիայի, Դիարբեքիի և Ադանայի նահանգների որոշ շրջաններ:

IX. 1920թ. օգոստոսի 28-ի՝ Դիարբեքի քաղաքի և նահանգի այն հայերի ներկայացուցիչների նամակը (760J.6715/16) նախագահին, որոնք օգոստոսի 22-ին Նյու Ջերսիի Վեստ Յորկենում անցկացրած հանրահավաքի ժամանակ որոշել են դիմել նախագահ Վիլսոնին, որ նա «ներառի իրենց քաղաքն ու նահանգը նոր Հայկական Հանրապետության սահմաններում»:

Վերոթվարկյալ փաստաթղթերը լրացվում են առանձին անձանց, կազմակերպությունների և հանրահավաքների բազում նամակներով ու հեռագրերով նախագահի և պետքարտուղարին: Դրանցով կոչ է արվում Խարբերդը ընդգրկել նախագահի կողմից ձևավորվող ՀՀ սահմաններում:

Կարելի է հավելել, ...որ Ամերիկայում Յայաստանի Հանրապետության ներկայացուցիչները այս զեկուցումը կազմող հանձնաժողովին ներկայացրել են ոչ //-78 պաշտոնական ակնարկ, ըստ որի՝ իրենց կառավարությանը խիստ ցանկալի է ապահովել Խարբերդի այն հովիտը, որը ձևավորվում է Եփրատի՝ այստեղից դեպի արևմուտք ձգվող ոլորանով, ինչպես նաև Մուրադի հովտի միջով դեպի Բիթլիսի նահանգը ձգվող պատշաճ միջանցքը:

## I. Փաստարկներ՝ Խարբերող Հայաստանի սահմաններում ներառելու օգտին<sup>14</sup>

Դրա օգտին... տվյալները... հնարավոր է հետևյալ կերպ ամփոփել.

### 1. Պատմական տվյալներ

Խարբերող պտմականորեն Մեծ Հայքի մասն է: ...Դիարբեքիրը պատմականորեն հայկական է, Տիգրան Մեծի նստավայրն է:

### 2. Մշակութային տվյալներ

...Նահանգում կա հայկական 2 քուլեջ ու 27 միջնակարգ դպրոց, բացի դրանից, կա ֆրանսիական 2 և գերմանական 1 վարժարան, ինչպես նաև ամերիկյան Եփրատ քուլեջը, որի սկզբնական՝ Հայկական քուլեջ անվանումը մերժվել է թուրքերի կողմից: Այս օտարերկրյա հաստատությունների ուսանողները բացառապես հայեր են, ինչպես նահանգի բժիշկներն ու իրավաբանները: Նահանգում պատրաստվում էր «Հայաստանի» բոլոր ուսուցիչների և հոգևորականների 75 տոկոսը: «Խարբերողի նահանգի 360 գյուղերից և ավաններից և ոչ մեկը զուրկ չէր հայկական ծագման մասին վկայող, հայատառ ու խաչերով եկեղեցի, վանք կամ գերեզմանոց ունենալուց»: ...

### 3. Ազգագրական տվյալներ

Խարբերող ճանաչվել է որպես հիմնականում հայկական նահանգ:

Սա հայախոս շրջան է: Այս երկրամասի հայերից 40 տոկոսը կամ 40-45 հազարը՝ ծագումով խարբերողի են: Այժմ Հայաստանի Հանրապետության սահմաններում և Թուրքահայաստանի Եփրատի ավազանում կա մոտավորապես 1.700.000 հայ ազգաբնակչություն. տարբեր ցեղերի մահմեդականների առավելագույն թիվը՝ 750.000 է:

Ըստ դր.Փաստրմաճյանի՝ 1914թ. նահանգն ունեցել է 168.000 հայ, 102.000 թուրք և 95.000 քուրդ բնակչություն: ...Ահա թվեր, որոնք վերցված են Մարսել Լեարի 1913թ. «Հայկական հարցը» գրքից և Ռուսաստանի արտգործնախարարության 1915թ. «Նարնջագույն» գրքից: Բացառությամբ Մալաթիա գավառի, [բնակչության] ընդհանուր թվաքանակն աճել է 5000 քրիստոնյա ասորիներով ու 80.000 ոչ մահմեդական կրճղվաշներով<sup>15</sup>:

Հավաստվում է, որ Դիարբեքիրի նահանգում հայերը նույնպես գերակշռում են: Կոստանդնուպոլսի Հայկական պատրիարքարանի 1912-ի վիճակագրությունը հետևյալն է.

մահմեդական թուրքեր	45.000	քրիստոնյաներ՝ հայեր	105.000
նստակյաց քրդեր	30.000	այոք	<u>60.000</u>
քոչվոր քրդեր	25.000	ընդամենը	165.000
ընդամենը	100.000	այլք, ոչ քրիստոնյա	<u>31.000</u>
		ընդամենը	296.000

### 4. Տնտեսական տվյալներ

Խարբերող տնտեսապես Հայաստանի ամենահարուստ երկրամասն է: Խարբերողի գավառում բավականին զարգացած է գյուղատնտեսությունը...

Հանքային հարստությամբ աչքի են ընկնում Հայաստանի կենտրոնական լեռնաշխարհի ծայրամասերը միայն, որտեղ լավայի վիթխարի

կեղևն երկրաշարժների հետևանքով բեկվել է...

Խարբերող առատ է հանածոներով, հետևաբար՝ ցանկալի է Եվրոպայի աչքին: Կապան Մադենի արծաթի հարուստ հանքը գտնվում է Խարբերդի շրջանում... Խարբերդի ամբողջ վաճառականությունը, գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը հայեր են: Դրամատերերը և արհեստավորները բացառապես հայեր են... //-79

Տնտեսական առումով, Հայաստանի Հանրապետությունը Դիարբեքի ճահանգի կարիքն ունի: Նա չպետք է զրկվի Արղանա[մադեն]ի պղնձով առատ հանքերից, ոչ էլ Տիգրիս գետի երկայնքով փռված բերրի հողերից ու ջրի հսկա ուժից...

6. Ռազմավարական տվյալներ

Մեջբերվող վավերագրում ներկայացված փաստարկներից ամենահամոզիչները կարծես առաջ է քաշել գեներալ-մայոր Բագրատունին:

II. Փաստարկներ Խարբերդը Հայաստանի սահմաններում ընդգրկելու դեմ

Մենք պատրաստ ենք ընդունել [Կարող ենք խոստովանել], որ ըստ էության, հայերի պնդումը լավ է հիմնավորված: Թեև, եթե հարցը բաց է հետագա քննարկման համար, անկեղծությունը պահանջում է լրացնել, որ նրանց ապացույցներին կարելի է որոշ առարկություններ բերել:

Ա. ...Խարբերդի մեդրեսեները (իսլամական հոգևոր դպրոցները) քանակով զիջում են միայն Կոստանդնուպոլսի դպրոցներին: Ըստ ֆրանսիացի Քինեի<sup>16</sup> 1891-ին նահանգում կար նման 45 հաստատություն, որից 28-ը գտնվում էին գավառում, ինչպես նաև տարրական 22 դպրոց:

Բ. Խարբերդի մինչպատերազմյան բնակչությունը... առավելապես մահմեդական էր:

Ըստ հյուպատոս Լ.Ա.Դեյվիսի, որի 1918թ. փետրվարի 9-ի բովանդակալից զեկուցագիրը գրանցվել է Պետդեպարտամենտում, 1914 թվականին նահանգի ամբողջ բնակչությունը կազմում էր մոտավորապես 500.000 մարդ, որոնցից շուրջ 150.000-ը հայ էր... Նա պնդում է, ...որ «Խարբերդ քաղաքը զգալի չափով մահմեդական էր, սակայն Մեզիրեում<sup>17</sup> ու դրա շրջակայքում բնակչության համարյա կեսը հայեր էին»: Այդ գնահատականը հավանաբար կիրառելի է Խարբերդի գավառի կամ գավառակի նկատմամբ...

գավառ թուրքեր,	քրդեր/կըզըլբաշներ,	տարբեր քրիստոնյաներ,	հայեր
Խարբերդ 130.000	100.000	1.500	80.000
Դերսիմ 10.000	50.000	500	27.000
ընդամենը 140.000	150.000	2.000	107.000 ...

Գ. Եթե կարելի է ասել, որ պատերազմից առաջ առևտրի և գյուղատնտեսության մեծ մասը հայերի ձեռքումն էր, ապա նույնը չես կարող նշել այսօրվա մասին: Բայց եթե անգամ այդպես էլ լիներ, փաստն այն է, որ Խարբերդի ապրանքների արտահանումը չի իրագործվում վերին Եփրատի կամ նրա արևմտյան հունով<sup>18</sup> դեպի Բիթլիսի և Վանի նահանգները: Խարբերդի և [Սև] ծովի միջև հաղորդակցության հիմնական ուղիները ձգվում են Սեբաստիայից և Ամասիայից դեպի Սամսուն, որոնք, Սևրի պանանագրի համաձայն, Թուրքիայի սահմաններում են գտնվելու: Մյուս ու-

ղիները ձգվում են հարավ՝ դեպի Դիարբեքիր ու Միջագետք կամ դեպի Մալաթիա և Կիլիկիա... Եթե Խարբերդը ընդգրկվեր Հայաստանի կազմում, ապա... ահանգը ստիպված կլիներ փոխելու առևտրի իր ամբողջ կառուցվածքը...

Դ. Պետք է խոստովանել, որ Խարբերդը Հայաստանին հատկացնելու՝ գեներալ-մայոր Բագրատունու ներկայացրած ռազմավարական փաստարկը հիմնավոր է:

Ե. Այնուհանդերձ, Խարբերդը Հայաստանի սահմաններում ընդգրկելուն առարկումների շարքում կա մեկը, որն, այս զեկուցագիրը հեղինակած հանձնաժողովի կարծիքով, վճռական է՝ նախագահ Վիլսոնը ընդունել է գլխավոր դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի հրավերը [հայերին տրամադրել Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգները, բայց ոչ Խարբերդը<sup>19</sup>] առանց վերապահումների... // -80

### III. Եզրակացություն

Որքան էլ [ԱՄՆ-ի] նախագահի համար հասկանալի են հայերի՝ Խարբերդի նկատմամբ պահանջները, այնուամենայնիվ, այժմ չի կարող չորս [վերոհիշյալ] նահանգներից բացի անդադարնալ այլ տարածքներին...

Եթե շահագրգիռ գլխավոր կողմերը՝ [Հայաստանն ու Թուրքիան], գերադասեն փոխհամաձայնության գալ միմյանց հետ ու վերափոխումներ կատարել, ապա նրանց, իհարկե, ոչ ոք չի կարող խանգարել դա անելու»:

ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու, հ.35: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

### N° 3

ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ՄԱԱՕԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՄԱՅՈՐ Ֆ.ՅՈՎԵԼԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐՆ

ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ Զ.ՅՅՈՒԶԻՆ՝

ԹՈՒՐԶ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 մայիսի 1922թ., Խարբերդ

«Տեար, պատիվ ունեմ Ձեր քննարկմանը ներկայացնելու փաստեր, որոնք վերաբերում են Մամուրեթ ուլ Ազիզ նահանգի կառավարության կողմից ինձ ձերբակալելուն ու Թուրքիայից բռնի արտաքսելուն, երբ ես ծառայում էին Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] Խարբերդի միավորի տնօրեն՝ (այնտեղ էր շտաբակայանը), ինչպես նաև համառոտ ակնարկ ներքին Անատոլիայում տիրող այն պայմանների մասին, որոնք էապես առնչվում են տեղի քրիստոնյա փոքրամասնություններին:

Կոստանդնուպոլսից մեկնել են 1921-ի սեպտեմբերի 15-ին՝ հրաման ունենալով Սամսունի վրայով անհապաղ ուղևորվել Խարբերդ ու ժամանելուց հետո ստանձնել Խարբերդի միավորի տնօրինությունը՝ փոխարինելով պ.Ուոլտեր Կուրտին: Խարբերդ ժամանել են հոկտեմբերի 3-ին, իսկ 4-ին պ.Կուրտի հետ այցելել են նահանգապետի պաշտոնակատարին և այլ պաշտոնատար անձանց՝ ներկայացնելով իմ լիազորագիրը:

Սկզբում ինձ բոլորովին էլ ջերմ ընդունելություն ցույց չտվեցին. նահանգապետի պաշտոնակատարը և այլ կարևոր պաշտոնյաներից մի



քանիսը պնդում էին, որ ես ցանկալի չեմ, որ նրանք բավարարված էին պ.Կուրտի վարչությամբ, և կարծում էին, որ Մերձավոր Արևելքում օգնություն [կոմիտեն] չպետք է փոխի իր տնօրեններին՝ առանց կանխապես հավաստիացման, որ փոփոխությունը լիովին բավարարում է տեղի կառավարչությանը:

Կ.Պոլսում ես ստացել եմ Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] կառավարիչ տնօրեն պ.Յ.Ջեկիթի բանավոր կարգադրությունները, ըստ որոնք՝ հարկավոր էր տնտեսել Խարբերդի միավորման ծախսերն ու վերացնել միավորի գործունեության այն բոլոր փուլերը, որոնք պատշաճորեն չեն համապատասխանում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] աշխատանքի ոլորտներին: Անհապաղ անցել եմ այդ հրամանների կատարմանը, որից հետո վարչությանս նկատմամբ նկատելի թշնամանք է առաջացել բարձրաստիճան որոշ այն պաշտոնյաների շրջանում, որոնք անձամբ են օգտվել Խարբերդի Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] առկայությունից:

Անցյալ դեկտեմբերի մեկին մոտ օրերին Անգորայի<sup>20</sup> թուրքական կենտրոնական կառավարության կողմից Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] աշխատանքը հեշտացնելու համար նրան կցված հանձնակատար Յամդի բեյը բացահայտորեն ու քողարկված ձևով, օգտագործելով իր իշխանությունը, անում էր ամեն հնարավորը, որ խաթարեր Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] առաքելությունը. անձնական նպատակներով օգտագործելով իր պաշտոնեական դիրքը՝ ուղղակի պահանջով դիմել էր ինձ, որ Մերձավոր Արևելքում օգնությունը [կոմիտեն] վերանորոգեր Մեզիրեում հեծյալ ոստիկանության հրամանատար Լուսվի բեյի տունը (աշխատանքի արժողությունը 4.000 արծաթե պիաստր, կամ 80 դոլար). վերջինս այն ժամանակ զբաղեցնում էր շենքը, որը վարձել էր Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեն], և որն օգտագործվում էր որպես որբերի համար հագուստ պատրաստելու տեղական բրդի ջուլհականոց: Դրանից չորս ամիս առաջ Լուսվի բեյը ուժով էր տիրել այդ շենքին, իսկ Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեն] մի քանի անգամ դիմել էր նահանգապետի պաշտոնակատարին՝ այն վերադարձնելու պահանջով: Հիշատակված նորոգումները պետք է դառնային այդ կառույցն ազատելու գինը:

Մի քանի վկաների ներկայությամբ ես տեղյակ եմ պահել Յամդի բեյին, որ նման ծախսերը չեն մտնում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] գործունեության ոլորտը, և, հետևաբար, ես լիազորված չեմ արտոնելու նման ծախսեր: Ավելին, ես նրան տեղյակ եմ պահել, որ մահմեդական աղքատներին, որբանոցներին կամ դպրոցներին օգնելու յուրաքանչյուր խելամիտ պահանջ բավարարվելու է՝ ելնելով կայանի պաշարներից, սակայն ես ստիպված եմ մերժել պետական պաշտոնյաների կամ այլ անձանց՝ դրամական նվերների կամ մատակարարումների հետ կապված բոլոր պահանջները:

Թուրք պաշտոնյաների վերաբերմունքն էլ ավելի վատթարացավ անգամ, ու Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] աշխատանքն արգելակելու համար նրանք դիմեցին բազում անազնիվ հնարքների, ինչպի-

սիք էին՝ տեղական շուկաներից ցորեն կամ փայտ գնելու թույլտվության մերժում, ինչը ստիպում էր ավելի կամ պակաս գաղտնի կերպով բազմամղոն ճանապարհ կտրել ու հասնել հեռավոր գյուղեր՝ այդ երկուսը հարկավոր քանակությամբ առնելու, և Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեից] ամբողջությամբ կախված մեր հաստատությունների 5000 կամ ավելի կենվորներին ապահովելու համար, ինչպես նաև Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] որբերով զբաղեցված շենքերի ուժով գրավում, նրա դպրոցների՝ առանց լիազորության փակում, Մերձավոր Արևելքում օգնության ծառայողների անօրինական կալանավորում, ինչպես նաև, որտեղ էլ որ պատահի, Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] շարժիչավոր կամ լժկան փոխադրամիջոցների կամայական զավթում և օգտագործում, Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] միջկայանային նամականու ապօրինի առգրավում, առանձին պաշտոնյաների կողմից ՄԱԱՕԿ-ի պաշարների յուրացում, տիֆով ծանր հիվանդ ամերիկացիներին բժշկական օգնություն ցույց տալու նպատակով Խարբերդի միավորի աշխատանքի շրջանակներում ամերիկացիներին ուղևորության թույլտվության մերժում ու մեր հաստատությունների ներքին վարչության գործերին ուղիղ ապօրինի միջամտություն:

Այդ ժամանակահատվածում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեն] ընդունել էր Մեզիրեի թուրքական որբանոցը՝ ստանձնելով, ըստ նահանգապետի պահանջի, նրա գործունեության ամբողջ ծախսն ու կանոսվին իր վրա վերցնելով այն բոլոր չքավոր մահմեդականներին աջակցությունը, որոնց նախկինում աջակցում էր քաղաքի վարչությունը: Խարբերդի միավորի աշխատանքն ընդգրկում էր 5.000 որբերի՝ ամբողջական, ու (միջին թվով) 3.000 հույն գաղթականների, ինչպես և 1.500 աղքատների և ընչազուրկների մասնակի խնամքը: Խարբերդի միավորի ճյուղերը գտնվում են Մեզիրեում, Արաբկիրում և Ակնում<sup>21</sup>, Մեզիրեին հարակից տասը գյուղերում՝ բոլորն էլ Մամուրեթ ու Ազիզի նահանգում, Մալաթիայում, ինչպես և Սեբաստիայի նահանգում: Մենք զբաղեցնում ենք հաստատություններ և աշխատանոցներ, ամբողջությամբ՝ շուրջ 65 կառույց, իսկ անցյալ տարի նահանգի կառավարությունը կամ անհատ պաշտոնյաները ՄԱԱՕԿ-ից ուժով խլեցին 15 շենք, դեպքերի ճնշող մեծամասնությամբ՝ առանց հիմնավորման և միշտ ապօրինաբար: (Տե՛ս սրան կից կետավորված գույքացուցակը): Ջավթված շենքերի մեծ մասի վարձակալությունը մարվել է կանխապես, մեկ տարի կամ ավելի մեծ ժամկետով, կատարվել են նաև լայնածավալ նորոգումներ: ՄԱԱՕԿ-ն ոչ մի պատասխան չի ստացել, թեև պահանջները հաճախակի են կատարվել:

Հաշվի առնելով ներկա դժվարին դրությունը, որն անհնարին է դարձրել Խարբերդի միավորի պատշաճ գործունեությունը, ես շտապ մի հայց եմ հղել Անգորայում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] ներկայացուցիչ օրիորդ Էննի Թ.Ալենին, որ ինձ Անգորա ժամանելու թույլտվություն ապահովի՝ կենտրոնական կառավարության հետ գործերը քննարկելու համար, կամ էլ ինքը գա Խարբերդ: Օրիորդ Ալենը Խարբերդ է ժամանել 1921-ի դեկտեմբերի 20-ի շուրջ և ինձ անմիջապես տեղյակ է պահել, որ Անգորայի կառավարությունը նրանից պահանջել է ինձ վճարել

Թուրքիայից, քանի որ ըստ ներքին գործերի նախարար Ֆետի բեյի՝ նրան տված բանավոր պատճառաբանության՝ «ես Թուրքիա չեմ եկել, որ թուրքերին օգնություն ցույց տամ, ես ափսոսում եմ, որ նրանց տրամադրվել է ինչ-որ օգնություն, և իմ վարչության օրոք ես մահմեդականներին որևէ օգնություն չեմ տրամադրի»: Կենտրոնական կառավարությունը մերժել է բացահայտել ինձ ուղղված բողոքի աղբյուրը, բայց թույլատրել է օրհորդ Ալենին մեկնել Խարբերդ՝ հարցը հետազոտելու, և խոստացել է հետաձգել խնդրի լուծումը, որ նա ժամանակ ունենա այն հիմնովին ուսումնասիրելու և զեկուցելու համար:

Օրհորդ Ալենը Խարբերդում մնացել է շուրջ մեկ ամիս... ու նահանգապետը ինձ ստույգ հավատացրեց... որ շատ գոհ է իմ աշխատանքից ու վարչությունից, և որ ինքը այդպես էլ կհաղորդի կենտրոնական կառավարություն, եթե նրանից զեկուցում պահանջեն: Ռազմական հրամանատար Բեհաեդդին Շաքիրն ու ազգայնականների կենտրոնական կոմիտեի նախագահ Յաճի Կայա բեյը, մյուս երկու կարևոր պաշտոնյաները, ըստ էության, արեցին նույն հայտարարությունները՝ օրհորդ Ալենի ներկայությամբ:

Նահանգապետի հետ մի տեսակցության ժամանակ օրհորդ Ալենը խոսել էր նահանգով անցնող հույն գաղթականների նկատմամբ ցուցաբերած անթույլատրելի դաժանության, նրանց աջակցելու, որբերին ու հիվանդ երեխաներին խնամելու հարցերում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեին] պաշտոնյաների մերժման մասին. նահանգապետը խիստ բարկացել էր և օրհորդ Ալենին ասել, որ կխնդրեի չխառնվել իրեն չվերաբերող քաղաքական գործերին... Եթե անօգնական կանանց և երեխաների հետ ամենատմարդի վերաբերմունք չընդունելն ու մշտական պնդումը, որ Մերձավոր Արևելքում օգնությանը պետք է թույլատրել իր հնարավորությունների սահմաններում օգնություն ցույց տալ այդ մարդկանց, կարելի է արդարացիորեն անվանել «քաղաքական գործերին խառնվելն», ապա ես մեղավոր եմ դրանում...

Մինչև 1922-ի հունվարի 7-ը... օրհորդ Ալենը... Անգորա է հղել հետևյալ հեռագիր՝ ներքին գործերի նախարարին.

«Ֆետի բեյ, ներքին գործերի նախարար, Անգորա

Ես բարձր եմ գնահատում այն բարեհաճությունը, որն ինձ հնարավորություն է ընձեռել հետաքննել մեր, Խարբերդում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] տնօրեն պ.Յովելի դեմ միտված գանգատը: Համոզված եմ, որ նրա որոշ պնդումների մեկնաբանությունը եղել էր նրանց սխալ հասկանալու հետևանք: Ուստի խնդրում եմ վերանայել այն պահանջը, որ ես նրան հեռացնեմ»: Էննի Թ.Ալեն»:

Օրհորդ Ալենը մտադիր էր Անգորա վերադառնալիս անձամբ հարուցել Խարբերդի իրադրությանը վերաբերող բոլոր հարցերը կենտրոնական կառավարության պաշտոնյաների առջև...

Մինչև հունվարի 17-ը ստացվել է օրհորդ Բիլինգզի<sup>22</sup> հետևյալ հեռագիր. «Պ.Յովելին: Ներքին գործերի նախարարը ստացել է օրհորդ Ալենի հեռագրերն ու նրանց պատասխաններ է հղել: (Անգորա) Բիլինգզ»:

Մեզիրեում տեղակայված կառավարությունը... ժխտել էր պատաս-

խան ստանալու փաստը:

1922-ի հունվարի 21-ին օրիորդ Ալենը թողեց Խարբերդը. նա տիֆով էր վարակվել Յեքիմխանում<sup>23</sup> Խարբերդից Սեբաստիա<sup>24</sup> ճանապարհի երկու երրորդը կտրելուց հետո, փետրվարի 3-ին<sup>25</sup> ստույգ կամ մոտավորապես, ժամանել էր Սեբաստիա ու փետրվարի 6-ին<sup>26</sup> մահացել: Նա ուղևորության վերջին սակավ օրերին ստիպված էր հեծան գնալ, քանի որ մեքենաները չէին կարող հաղթահարել ձյունառատ ուղիներն, ու ժամանակի մեծ մասն անհրաժեշտ էր որ երկու տղամարդ, ելնելով իրավիճակից, նրան զորավիզ լինեին թամբին մնալու համար:

Օրիորդ Ալենը իր ձեռքի տակ է ունեցել տեղական կառավարչության հետ վիճաբանություններ պարունակող Խարբերդի նամականու որոշ պատճեններ, որոնք ներառում էին բնագիր զեկույցներս Խարբերդի կայանում ՄԱՍԿ-ի աշխատանքային պայմանների մասին, ինչպես որ ես նրանց գտա. մեկը հասցեագրված էր Անգորա՝ օրիորդ Ալենին, իսկ մյուսը՝ Սամսունում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] տնօրեն պ.Ջ.Վ.վան Տուրին, երկուսն էլ՝ 1921-ի հոկտեմբերի 18-ի թվակիր. երկուսն էլ առգրավել է կառավարությունը՝ դրժելով կենտրոնական իշխանությունների և օրիորդ Ալենի միջև առկա համաձայնագիրը, որ երկրի խորքում ՄԱՍԿ-ի կայանների միջև փոխանակվող նամականին չի խոչընդոտվի կամ գրաքննության չի ենթարկվի: Ջեկույցներին գումարվում էր մեկ նամակիս ուրվագիծը՝ այն նյութերով, որոնցով նրան խնդրում էի «ճնշում գործադրել» Անգորայի կենտրոնական կառավարության վրա՝ որպեսզի վերջինը դիմեր նպաստավոր քայլերի, կար նաև փոքր գրքույկը՝ իր բոլոր գրառումներով: Ես տեղյակ չեմ՝ արդյո՞ք Սեբաստիայից ստացել են որևէ ստույգ տեղեկատվություն օրիորդ Ալենի ունեցած-չունեցածի մասին, բայց Դիարբեքիում թուրք պաշտոնյան ինձ տեղյակ է պահել, որ մարտի 10-ին կամ շուրջ այդ օրերին օրիորդ Ալենի թղթերը հայտնվել են կառավարության ձեռքին:

Փետրվարի 21-ին Խարբերդի գրասենյակումս ինձ այցելած ոստիկանության հանձնակատարը հաղորդել է, որ ես պետք է ոստիկանության պետին տրամադրեմ երկու լուսանկարներս և անհապաղ՝ երկու օրվա ընթացքում, մեկնեմ Ամերիկա: Հաջորդ օրը այցելեցի նահանգապետին, և նա ինձ տեղեկացրեց, որ հրամանը եկել է Անգորայից և որ դրանից ավելի, գործին վերաբերող որևէ մանրամասնի բացարձակապես չի տիրապետում: Գործերս օգնականիս, ինչպես որ հարկն է հանձնելու համար, անհրաժեշտ ժամանակ տրամադրելու խնդրանքիս ի պատասխան՝ նահանգապետն ասաց, որ անձամբ իր վրա է վերցնելու ինձ մի շաբաթ տրամադրելու պատասխանատվությունը, որ վերջացնեմ գործերս:

Նահանգապետի համաձայնությամբ, անհապաղ հետևյալ շտապ հեռագիրն են ուղարկել Անգորա՝ նորին գերազանցություն Սուստաֆա Քեմալ փաշային ու ներքին գործերի և արդարադատության նախարարներին.

«Նորին գերազանցություն Մ[ուստաֆա] Ք[եմալ] փաշային  
Խարբերդ, 1922-ի փետր[վարի] 22 ...

Առանց ռասայական կամ հավատքի խտրականության՝ չքավոր ա-

յրերին և որբերին օգնություն ցույց տալու և նրանց արհեստներ սովորեցնելու պարտականություններս կատարելիս, այժմ հայտնվել են մեկ հրամանի առերես, ըստ որի՝ պետք է (անհապաղ) հեռանամ երկրից: Քանի որ հավատարիմ էի մնում ՄԱՍԿ-ի և կենտրոնական կառավարության միջև համաձայնեցված՝ հինգ կետից բաղկացած պայմաններին, որոնք հազար ինը հարյուր քսանի, դեկտեմբերի տասներկուսին բերել էր Մամուրեթ ու Ազիզ նահանգի նահանգապետը, կասկած չունեմ, որ ինձ ուղղված գանգատների պատճառը անձնական շահերն են: Յետևաբար, ակնածանքով հայցում եմ Ձեր անհրաժեշտ թույլտվությունը, որ մեկնելիս, եթե ինձ արգելեն շարունակել աշխատանքս, կարողանամ ներկայանալ Ձերդ ազնվությանը և անձամբ տալ որոշ կարևոր հարցերի բացատրությունը: Յովել, ՄԱՍԿ-ի տնօրեն, Խարբերդի միավոր»:

Բացի դրանից, [1922-ի փետրվարի 25-ին] շտապ հեռագիր են ուղարկել օրիորդ Ալենի մահից հետո Անգորայի Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] ներկայացուցիչ օրիորդ Բիլինգզին... Փետրվարի 27-ին ստացել եմ օրիորդ Բիլինգզից հետևյալ պատասխան.

«Պ.Յովելին, Խարբերդ

Յ.18 փաստն անհապաղ զեկուցել եմ ներքին գործերի նախարարին: Նախարարը Ձեր այնտեղ մնալու հրաման է արձակել: Այդ գործում, բացի թյուրիմացությունից, ուրիշ ոչինչ չկա: Ձեզ նամակ կուղարկեմ: (Անգորա) Բիլինգզ»...

1922-ի մարտի 5-ի՝ կիրակի օրվա առավոտը ինձ բռնի տարան Խարբերդի մեր անձնակազմի շենքից և ուժով ուղարկեցին Դիարբեքի կողմը: Արգելեցին հետս թարգմանիչ վերցնել ու թույլ չտվեցին հրաժեշտի խոսք ասել Մեզիրեում գտնվող ամերիկյան անձնակազմին, թեև այն Խարբերդի մոտ էր ու հեռանալիս ինձ հարկավոր էր այնտեղով անցնել:

Ինձ պահում էին մշտական հսկողությամբ. գիշերները հետս մնում էր երկու հեծելակ տղամարդ, և երեք օր անց՝ ծանր ճամփորդությունից հետո, ժամանեցի Դիարբեքի: Իմ դուրս գալու երկրորդ օրը ձիուս հարվածից վնասեցի ծունկս ու մեծ ցավ էի զգում, երբ հասանք Դիարբեքի: Փորձեցի գնալ այն երկու ամերիկուհիների՝ որոնք պատասխանատու էին այստեղ ՄԱՍԿ-ի բարեգործական աշխատանքի համար, տուն, սակայն ինձ թույլ չտվեցին: Ինձ բերեցին ոստիկանակայան և այնտեղ հաղորդեցին, որ Մեզիրեի նահանգապետից ստացած հրամանի համաձայն, ինձ թույլ չեն տա տեսնվել ամերիկացիների հետ: Ապարդյունորեն բողոքեցի, թեև ի վերջո ապահովեցի թույլատրություն լուր տալ ամերիկացիներին, թե գտնվում էի ոստիկանակայանում: Նրանք եկել են ինձ տեսության և երեք դժվարին ժամերից հետո կարողացան ինձ գրավականով ազատելտանել գիշերելու իրենց խնամքի ներքո: Նրանք ինձ համար ստացական ստորագրեցին...

Դիարբեքիում ինձ հապաղեցին երկու շաբաթով... Երբ այնտեղ էի, ինձ մոտեցավ կիսապաշտոնական դիրք ունեցող մահմեդական, որը հայտնի էր որպես նահանգապետին շատ մտերիմ անձ, ու խնդրեց նահանգապետի հետ մի խնդրագիր հղել Անգորա՝ Մուստաֆա Քեմալ փաշային, հրաժարվելով իմ՝ որպես ամերիկյան քաղաքացու պաշտպանության ի-

րավունքից և համաձայնվելով ինձ ենթարկել թուրքական դատարանի քննությանը: Սա ես, անշուշտ, մերժեցի, նկատի ունենալով հատկապես այն փաստը, որ անտեղյակ էի այն գանգատի կամ մեղադրանքի էությանից, ըստ որի ինձ վտարել էին երկրից...

Դր.Վարդի հետ միասին Դիարբեքիրը լքեցի մարտի 24-ին՝ պահակների հսկողությամբ, և չորս օր անց ժամանեցի Ուրֆա...

Դր.Ռուֆ Պարմելի և օրհորդ Իզաբել Չարլի... Խարբերդից մեկնել են հունվարի 26-ին, բուք ու բորանի ժամանակ, նրանք հարկադրված էին ձյունապատ գիշերով հեծան գնալ բարձր սարերով և Դիարբեքիր հասան ինն օր հետո. սովորաբար, նման ուղևորությունը Խարբերդից տևում է երեք օր: Նրանք այնքան հիվանդ էին ու հոգնած իրենց սարսափելի փորձությունից, որ երեք շաբաթ ի վիճակի չէին շարունակելու իրենց ճանապարհը Դիարբեքիրից: Վերջապես նրանք հասան Ուրֆա, որտեղ անհրաժեշտ էր հապաղել ևս երկու շաբաթ...

Կառավարությունը հարկադրել էր Խարբերդի կայանը թուրք զինվորների հագուստի համար բրդյա գործվածք արտադրել՝ հակառակ իմ անհաջող բուռն բողոքի, որ սարքավորում չունենք նման աշխատանքի համար: Որպեսզի մեր վզին փաթաթի այս պահանջները, կառավարությունը զավթեց Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեին] պատկանող որոշ բրդյա կտորեղեն, ինչը ներկելու ենթակա մասնավոր ապրանք էր, ու մերժեց բաց թողնել այն՝ սպառնալով ներխուժել մեր շենքերն ու բռնագրավել ողջ հայտնաբերված զանգվածը, եթե չհամաձայնենք կառավարության համար բրդյա գործվածք արտադրել: Կառավարության համար կատարվող այս ստիպողական աշխատանքի պատճառով անցած ձմեռ ի վիճակի չէինք մեր որբերին անհրաժեշտ հագուստով ապահովել, և դրա պատճառով շատ տանջանք ու հիվանդություն եղավ<sup>27</sup>:

Երկու տարուց ավելի երկրի խորքում բնակվող քրիստոնյա բնակչության պայմանները անընդհատ վատթարանում են. հայ և հույն աքսորյալները գտնվում են ստրկությունից էլ ծանր պայմաններում: Մինչ օրս էլ Խարբերդը հանդիսանում է հայկական [կյանքի] մեծ կենտրոն, հայերից շատերը ունեին ամերիկյան քաղաքացիություն, ինչը թուրքական իշխանությունների կողմից չէր ճանաչվում: Բերեմ Ներսես Տեր-Կարապետյանի օրինակը. Մասաչուսեթսում ծնված տասներկու տարեկան տղան Խարբերդ (Անատոլիա) է բերվել հենց պատերազմի շեմին: Նրա ծնողները սպանվել են աքսորի ժամանակ, իսկ երեխային՝ ծանր վիրավոր վիճակում, Մեզիրեի փողոցից վերցրել են ամերիկյան հյուպատոսարանի ծառայողներն ու խնամել: Հետագայում նրան տեղավորել են գերմանական որբանոցում, ավելի ուշ [այդ հիմնարկը] ստանձնել էր Մերձավոր Արևելքում օգնություն [կոմիտեն]: Տղան ուներ ամերիկյան քաղաքացիության վկայական. վերջինս ստորագրել էր Խարբերդում նախկին հյուպատոս պ. Լեսլի Ա.Դեյվիսը Պորտ Ջեֆերսոնից (Նյու Յորք): Սակայն երբ նահանգապետին ներկայացրել են փաստաթուղթն ու պահանջել թույլ տալ տղային դուրս տանել ինձ հետ, երբ գնալուս ժամանակը գա, պաշտոնյան չի ճանաչել փաստաթղթի օրինականությունը: Այնուհետև փորձել են օրինական որդեգրել տղային, որպեսզի երբ գա մեկնելուս պահը, կարողանամ

ինձ հետ տանել Ամերիկա, սակայն կառավարությունը սա ևս արգելեց:

Ոչ մի քրիստոնյայի թույլ չեն տալիս գալ Մամուրեթ ուլ Ազիզ, և Խարբերդի ՄԱԱՕԿ-ը ստիպված էր անցած հոկտեմբերին իր շտաբակայան վերադարձնել շուրջ 75 հազար դուլար: Այն, ուղարկված լինելով Ամերիկայում բնակվող անձանց կողմից, պահվում էր հայերի ճանապարհածախսը հոգալու համար ու դա պետք է օգտագործվեր հայերի կողմից երկրից հեռանալու համար: Քրիստոնյա տղամարդկանց ու տղաներին բոլորովին անհիմն բանտ են նետել, որ պաշտոնյաները, որոնց ռոճիկը սովորաբար վեց ամսով կամ շուրջ այդքան ժամանակով ուշանում է, նրանցից փող կորզեն, իսկ քրիստոնյա աղջիկներին ու կանանց, որպես իսկական ստրկուհիների, բռնությամբ խցկել են մահմեդականների տները: Նման //-81 բազմաթիվ դեպքերի ականատես են եղել և դրանք արձանագրել են Խարբերդի թղթապանակներում: Քրիստոնյաները, փաստորեն, իրավագուրկ են թուրքական դատարաններում և նրանք չեն համարձակվում դիմել կենտրոնական կառավարությանը. ոչ տառապագին աքսորի, և ոչ էլ առանց քննության բանտ նետվելու համար փոխհատուցում ստանալու նպատակով: Վերջերս ուժի մեջ է մտել մի օրենք, որն արգելում է քրիստոնյաներին ունեցվածք ժառանգել, եթե այն իր հորից կամ եղբորից չէ: Իսկ մնացած գույքը վերցվում է հօգուտ կառավարության: Ավելին, եթե քրիստոնյա տերերը իրենց գույքի վայրում չեն, ունեցվածքը առգրավվում է և, այդուհանդերձ, հենց այդ օրենքը կիրառող կառավարությունն արգելում է քրիստոնյաներին ուղևորվել այնտեղ, որտեղ նրանց ունեցվածքն է: Այլ դեպքերում, քրիստոնյաներին, որոնք սեփականության բոլոր օրինական իրավունքներն ունեն, արգելում են դա հետ ստանալ մահմեդականներից, իսկ վերջիններս՝ դրանց պարզապես տիրում են առանց որևէ ձևակերպման. այնինչ քրիստոնյաներն էլ հարկադրված են վճարելու արտակարգ մեծ տուրքեր՝ վախենալով իրենց գույքն ամբողջությամբ կորցնելուց:

Նահանգի վարչությունը հանձնակատարի միջոցով բազմիցս դիմել է ինձ՝ մեր հաստատություններից դուրս հանելու շուրջ երկու հարյուր կամ ավելի, ջահել կանանց և աղջիկների, որոնք փրկվել են կամ փախել թուրքական հարեմներից և զինադադարի համաձայն՝ պատասպարվել են մեզ մոտ: Մենք քաջատեղյակ էինք այդ կանանց և աղջիկներին թուրքական տները վերադարձնելու նպատակի մասին, քանի որ մեզ երբեմն բացեիբաց խնդրում էին դուրս անել որոշ անձանց, որոնց, այսպես ասած մահմեդական անուսիները ճգնում էին հեռացնել մեր հաստատություններից: Ես հրաժարվել եմ կատարելու այդ պահանջը, և ի վերջո, արձակվեց մի հստակ հրաման, ըստ որի՝ պետք է մեր հաստատություններից վտարենք տասնհինգ տարեկանից բարձր արական կամ իգական սեռի բոլոր անձանց: Երբ թողել էի Խարբերդը, տասնհինգ տարեկանից բարձր տղաներին [մեր հիմնարկերից] վռնդում էին տասնյակներով, թեև դեռ ձգտում էինք հրաման ստանալ, որ չեղյալ համարվի կանանց և աղջիկներին վերաբերող կետը: Քանի որ նահանգում տնտեսական կյանքը փաստորեն մեռած է, դուրս նետված քրիստոնյաներին այլ բան չէր մնում անելու, քան օրվա հացի համար տղաներին՝ ճորտության մատնվել, իսկ աղջիկ-

ներին՝ ստրկությունից էլ վատթար պայմաններով մահմեդականների տներ մտնել: Այլընտրանքը սովամահ լինելն է...

Մամուրեթ ուլ Ազիզի նահանգում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեին] իրավունք չէր տրվում վարձով կամ անհատույց ծառայության վերցնել որևէ հույնի, չէր թույլատրվում անգամ վարձով կամ անհատույց որևէ հույնի տնվոր վերցնել, ու չէր կարելի խնամել որևէ հույն երեխայի, որբի կամ չքավորի. հաճախ մահմեդականներն էին ուժով տանում հույն տղամարդկանց՝ իրենց օգտին անհատույց աշխատացնելու, իսկ Մերձավոր Արևելքում օգնությանը [կոմիտեին] հարկավոր էր այդ մարդկանց կերակրել՝ սովամահությունը կանխելու համար...

Չնայած խարբերդում գործող ամերիկացիների զուտ մարդասիրական շարժառիթներին, վերջիններս թուրք պաշտոնյաների կողմից արժանանում են ամենաբիրտ և անմարդկային վերաբերմունքի, իսկ կառավարությունն անում է ամեն ինչ, որպեսզի անտանելի դարձնի ամերիկացիների այնտեղ մնալը: Չեն կարծում, որ բոլոր մահմեդականները հավանություն են տալիս կառավարության նման քաղաքականությանը, սակայն, մյուս կողմից, ես ստացել եմ հակառակն ապացուցող շատ որոշակի փաստեր...

Ներկայացնում եմ սույն նամակը Կ.Պոլսում գտնվող ամերիկյան բարձրագույն հանձնակատար, դերժովակալ Մարկ Լ.Բրիստոլին ուղարկելու համար, նաև ներկայացնում եմ տեղեկանքի լրացուցիչ պատճենը»...

ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1010, ք.1-9, 24-32: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից: //-82

#### № 4

ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ՄԱԱՕԿ-Ի ՏՆՕՐԵՆ, ՄԱՅՈՐ Ֆ.ՅՈՎԵԼԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ Չ.ՀՅՈՒԶԻՆ՝ ԽԱՐԲԵՐԴՈՒՄ, ՄԱԼԱԹԻԱՅՈՒՄ, ԱՐԱԲԿԻՐՈՒՄ ԵՎ ԱԿՆՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԶԱՎԹԱԾ ՄԱԱՕԿ-Ի ՇԵՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

2 մայիսի 1922թ., խարբերդ

«Գերմանական որբանոցի՝ 1919թ. ապրիլին գերմանական առաքելության կողմից ՄԱԱՕԿ-ին վարձակալությամբ տրված կառույցները.

1) Եիրոմ որբանոցի շենքը՝ կառավարությունը զավթել է 1920թ. նոյեմբերի 20-ին

2) Պանուալ որբանոցի շենքը՝ կառավարությունը զավթել է 1921թ. հունվարի 18-ին

3) Մեզիրեի դերձակի գործանոցը վարձակալությամբ վերցվել է պատվելի Պետրոսից, փողը նախօրոք չի վճարվել: Կառավարությունը զավթել է շենքը 1921թ. հունվարի 15-ին

4) մետաքսի ֆաբրիկայի և որբանոցի շենքը խարբերդում՝ երկու տարով (1920թ. օգոստոսի 15 - 1922թ.) վարձակալությամբ է վերցվել Էլմաս Քյուրքճյանից. 40 ոսկի վարձի ու 30 ոսկի նորոգումների համար վճարվել է: Կառավարությունը զավթել է շենքը, որը նորից մեկ տարով (1921թ. մարտի 1-ից) [իշխանություններից] վարձակալվել է 100 թղթադրամի դի-



մաց

5) անկելանոց Մեգիրեում՝ երկու տարով (1919թ. սեպտեմբերի 1 – 1921թ.) վարձակալությամբ է վերցվել էսթեր և Եղսա Ենովթյաններից, 30 ոսկի վճարվել է: Կառավարությունը զավթել է շենքը, որը նորից մեկ տարով (1921թ. մարտի 15-ը - 1922թ.) [իշխանություններից] վարձակալվել է 111 թղթադրամի դիմաց

6) Փայտե խանը<sup>28</sup> Մեգիրեում՝ (1921թ. մարտի 1 - 1922թ.) 50 ոսկով վարձակալությամբ է վերցրել դր.Խոռոնի խանը: Ըստ կառավարության 1921թ. մարտի 26-ի թվակիր հրամանի՝ փոխարինվել է Լևոն Խարբուլյանի խանի հետ: Կառավարությունը զավթել է շենքը 1921թ. մայիսին

7) մանկատունը Մեգիրեում (մուհաճիրների հիվանդանոց)՝ երկու տարով (1920թ. սեպտեմբերի 10 - 1922թ.) վարձակալությամբ է վերցվել սեփականատերեր Մահուդ էֆենդիից, Մուլինե Դարակճյանից, Միրիամ Պրոոյանից<sup>29</sup>, 48 ոսկի (30 ոսկի՝ կանխիկ, 18 ոսկի՝ նորոգումների համար) վճարվել է: Կառավարությունը զավթել է շենքը 1921թ. հունիսի 1-ին և մինչև 1921թ. նոյեմբերի 1-ը օգտագործել է ժանդարմների հրամանատարը

8) մանկապարտեզի շենքը Մեգիրեում՝ երկու տարով (1919թ. սեպտեմբերի 15 - 1921թ.) վարձակալությամբ է վերցվել պատվելի Պետրոսից՝ 20 ոսկու դիմաց: Վճարվել է: Կառավարությունը զավթել է 1921թ. հուլիսի 1-ին

9) պարենի ունյա<sup>30</sup> Մեգիրեում՝ մեկ տարով (1921թ. մարտի 1 - 1922թ.) վարձակալությամբ է վերցվել Լևոն Խարբուլյանից՝ նախօրոք վճարված 80 ոսկու դիմաց: Կառավարությունը զավթել է 1921թ. նոյեմբերի 20-ին

10) գրասենյակի շենքը Մեգիրեում՝ մեկ տարով վարձակալությամբ է վերցվել նախօրոք վճարված կանխիկ 35 ոսկու և նորոգումների համար տրված 20 ոսկու դիմաց...

11) որբանոցի շենքը Մալաթիայում՝ 1919թ. ապրիլին գերմանական առաքելության կողմից վարձակալությամբ տրվել է ՄԱԱՕԿ-ին: Թուրքական կառավարությունը զավթել է շենքը, որը հետո ՄԱԱՕԿ-ն նրանից վարձակալել է...

12) որբանոցի շենքը Արաբկիրում՝ վարձակալությամբ է վերցվել մասնավոր անձերից, թուրքական կառավարությունը զավթել է այն՝ [թուրքական] դպրոցի վերածելու համար...

13) որբանոցի շենքը Ակնում՝ վարձակալությամբ է վերցվել մասնավոր անձերից: Կառավարությունը զավթել է այն՝ [թուրքական] դպրոցի վերածելու համար... //-83

14) դպրոցի շենքը Մեգիրեում՝ 1919թ. ապրիլին գերմանական առաքելության կողմից վարձակալությամբ է տրվել ՄԱԱՕԿ-ին: Թուրքական կառավարությունն այն զավթել է 1922թ. մարտին

15) աշխատող աղջիկների տուն՝ 1919թ. ապրիլին գերմանական առաքելության կողմից վարձակալությամբ է տրվել ՄԱԱՕԿ-ին: Թուրքական կառավարությունն այն զավթել է 1922թ. մարտին»...

ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1010, թ.14-15: Բնագիր: Մեքենագիր: Թարգմա-

նություն անգլերենից:

N° 5

ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ՄԱՍՕԿ-Ի ՏՆՕՐԵՆ, ՄԱՅՈՐ Ֆ.ՅՈՎԵԼԻ ԶԵԿՈՒՑԱ-  
ԳԻՐԸ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ Զ.ՅՅՈՒԶԻՆ՝ ԱՐԱԲԿԻՐՈՒՄ ՄԱՍՕԿ-ԻՆ ԿԻՑ  
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԱԼԻԻ ԿՈՂՄԻՑ  
ՈՐԲԱՆՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N° 10

1922թ., Արաբկիր

«Հակառակ մեր բազմիցս կրկնվող պնդումներին, որ պետք է ժամանակին (ամեն օր) տեղյակ լինենք որբանոցի բոլոր գործողությունների մասին, ու գտնելով, որ սա չի կատարվել, հարկադրված ենք ընդունել հետևյալ որոշումը.

I. Որբանոցի համար հատուկ գնողի<sup>31</sup> ջանքերով սննդամթերք, կարագ և այլն առնելուց առաջ պետք է ներկայացվի պաշտոնյայի կողմից ստորագրած ցուցակը՝ գնումների համար նախատեսված պաշարի քանակով և արժեքով հանդերձ, որը կներկայացվի մեր ծառայողին: Պարենը կարելի է ձեռք բերել գնելու համար պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո:

II. Փողը, զգեստը և այլն, որ շնորհվելու են հայ աղքատներին ու հույն գաղթականներին, պետք է նշվեն ցուցակում ու բաժանելուց առաջ ներկայացվի մեր ծառայողին, զննվելուց և վերջինիս ստորագրելուց հետո միայն ցուցակի ապրանքների համար կվճարվի [կամ կտրվի]:

III. Գումարները, որոնք փոխանցված են Ամերիկայից կամ որևէ այլ վայրից (նրանց տերերին վճարելու համար), ինչ ծավալի էլ լինեն, ուղարկվելու են մեր պաշտոնյայի միջոցով, հասցեատերերին հանձնելուց առաջ պետք է կարգավորվեն ստացականներով, հետո նոր միայն վճարվեն:

IV. Մեր ծառայողը պետք է տեղեկացված լինի յուրաքանչյուր անձի մասին՝ որբանոց ընդունելուց առաջ: Պետք է կազմի նաև այն կանանց ու տղաների ցուցակը, որոնք թողնում են որբանոցը՝ նշելով նրանց մեկնելու վայրը: Մեր պաշտոնյան պետք է անհապաղ՝ հենց նույն օրը, տեղյակ պահվի, եթե որևէ մեկը լքում է որբանոցը կամ մեռնում:

V. Պարտադիր է հաղորդագրության միջոցով զեկուցել [նշելով ամենօրյա մուտքն ու ելքը,] հիվանդների գրանցումը, այնտեղ ընդունված և բուժվող անձանց իրական թիվը, ինչպես նաև հայտարարել նրանց հիվանդության բնույթը:

VI. Ամսվա վերջին հաշիվների ստուգումը հեշտացնելու և ստացված ու վճարված գումարի մասին ժամանակին (օրական) տեղեկացված լինելու համար, ամեն երեկո կազմվելու է եկամտի և ծախսերի մանրամասն ցուցակ:

VII. Ամսվա վերջին (ամենաուշը՝ հաշիվները փակելուց երկու օր հետո) կազմվելու է մի ցուցակ, որը պետք է ներկայացվի մեր ծառայողներին և ներառի բոլոր եկամուտներն ու ծախսերն՝ ամբողջությամբ և առանձին-առանձին (պայմանով, որ մանրամասները հետագայում ստուգվելու են), անսխալ և առանց բացթողումների. այն պետք է տրվի Ձեր

ստորագրությունը դնելուց անմիջապես հետո:

Ակնկալում եմ վերոհիշյալ հոդվածների կարգադրության անշեղ կատարումը՝

Արաբկիրում Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեին] կից պետական հանձնակատար Ալի»:

ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1010, ք.17-18: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից: //-84

## N° 6

ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ՄԱԱՕԿ-Ի ՏՆՕՐԵՆ, ՄԱՅՈՐ Ֆ.ՅՈՎԵԼԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ Զ.ՅՅՈՒԶԻՆ՝ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՅԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ Ֆ.ՅՈՎԵԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՆԳՈՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկտեմբեր, 1920թ., Անգորա

«Հոդված» 1. Անընդունելի է, որ Ամերիկյան միայն հայերին օգնի: Պայմանավորված է, որ այդ Հանձնաժողովը Կարմիր Մահիկի նման պետք է օգնի կարիքավորներին՝ առանց ազգության որևէ խտրականության:

Հոդված» 2. ՄԱԱՕԿ-ի անդամներին ու ծառայողներին, ինչպիսիք են ամերիկացիները, հույները կամ հայերը, կտրականապես արգելվում է տեղաշարժվել իրենց ներկա կայանից որևէ այլ տեղ: Ուղևորության կարող են մեկնել միայն նրանք, որոնց այստեղ շնորհվելու է հատուկ արտոնագիր, այն էլ հնարավոր է միայն վատառողջության կամ այլ նման պատճառներով:

Հոդված» 3. ՄԱԱՕԿ-ի գործողություններում, հակառակ նրանց բարի նպատակներին ու ամեն անցանկալի պատահարների նկատմամբ իրենց բնական ատելությանը, զգացվում է քաղաքական ուղղվածության որոշակի աստիճան: Այնուհետև որոշվել է, որ ՄԱԱՕԿ-ի յուրաքանչյուր միավոր կառավարությունից ստանալու է մի հանձնակատար, ինչպես դա արվել է տարբեր երկրներում Կարմիր Խաչի հանձնաժողովների նկատմամբ: Հետևաբար, ՄԱԱՕԿ-ի բոլոր գործերը հետայսու իրականացվելու են հանձնակատարի իմացությամբ:

Հոդված» 4. Այնուհետև նպաստամատույցի անդամների այժմյան քանակը չի աճի: Ծառայողները, որոնք պետք է տեղափոխվեն մի տեղից մյուսը, կարող են տեղափոխվել միայն այն դեպքում, եթե ներկայացվել են պատճառները և մենք, ուսումնասիրելուց հետո, համաձայնել ենք այդ փոփոխությանը:

Հոդված» 5. Խնդրում եմ տեղեկացնել վերոհիշյալ հոդվածների մասին ում որ հարկն է»:

ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1010, ք.19: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

ՄԵԶԻՐԵՈՒՄ ՄԱԱՕԿ-Ի ԱՆԴԱՄ Մ.Յ.ՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐ-ՏՈՒՂԱՐ Զ.ՅՅՈՒԶԻՆ՝ 1920Թ. Ի ՎԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԱՏԹԱՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

3 մայիսի 1922թ., Կ.Պոլիս

«Այդ հայտարարության ստորագրյալ ա.բ., բ.դ.Մարկ Յոպկինս Վարդը վերջին երեք տարիները Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] հաստատության բժշկական աշխատանքի վարձու ծառայող էր Անատոլիայում. այդ ամբողջ ժամանակը նա գտնվում էր Խարբերդում՝ Թուրքիա: Առաջին անգամ նա Թուրքիա է եկել 1915թ. Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան վարչության հանձնարարությամբ, թեև առաջին երկու տարիները մասնակցում էր Կ.Պոլսում Կարմիր Խաչի և նպաստամատույցի աշխատանքներին: Ամերիկայի պատերազմ մտնելուց հետո վերադարձել է հայրենիք և ընդունվել է ԱՄՆ-ի բանակ, որտեղ և ստացել է բժշկական ծառայության կապիտանի կոչում: Ֆրանսիայում բանակից զորացրվելուց հետո վերադարձել է Թուրքիա՝ քարոզչական գործունեություն ստանձնելու մտադրությամբ: Այդ պահին, առաքելությունը նրան ժամանակավորապես գործուղել է Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի], որտեղ նրան ուղարկել են Մամուրեթ ուլ Ազիզի (Թուրքիա) հիվանդանոցն ստանձնելու: Այն գտնվում է Խարբերդի մոտ: 1921-ի հուլիսի 1-ին, նոր պայմանագրով, նա ամբողջության անցել է Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] աշխատանքին:

Մամուրեթ ուլ Ազիզ նահանգում ՄԱԱՕԿ-ի գործունեության առաջին փուլում թուրքական տեղի պաշտոնյաներն ամեն պատիվ և աջակցություն ցուցաբերեցին, անգամ ճաշկերույթներին հրավիրելով ամերիկացիներին կառավարության ու ժողովրդի՝ մահմեդականների և ոչ մահմեդականների անունից: Մեզ թույլ էին տվել ճամփորդել նահանգով մեկ՝ հավաքել որբերին և օգնություն բաժանել բոլոր ռասաների և հավատքի աղքատներին ու կարիքավորներին: Հիվանդանոցը բացվել է խանդավառությամբ, և երեք կլինիկաները լցվել էին թուրք և ոչ թուրք հիվանդներով:

Առաջին տարվա վերջին, Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեն] հավաքեց ավելի քան 4.000 որբ, բացի դրանից, նա օգնում էր այն շուրջ 1.000 գաղթականներին, որոնք կարողացան վերադառնալ իրենց տները, և ավելին՝ նահանգի տառապյալներին բուժում էին 80 մահճակալ ունեցող հիվանդանոցում: Ինչպես կառավարությունն, այնպես էլ ժողովուրդը՝ թուրք լինի, հայ թե քուրդ, բարյացակամ էին ու երախտապարտ այն օգնության համար, որն նրանց հասցրել էին ամերիկացիները:

Ինչևհից, հենց որ ազգայնականներն անցան իրենց կառավարության հաստատմանը, մենք նկատել ենք, որ նրանց վերաբերմունքը սկսել է փոփոխվել: Մեր աշխատանքը ենթարկվեց որոշ սահմանափակումների, զգալիորեն աճել է անպատիժ ապօրինություն: 1920թ. նոյեմբերին ՄԱԱՕԿ-ի Խարբերդի կայանի տնօրեն պ.Յ.Յ.Ռիզզը ստացավ երկիրը թողնելու անակնկալ հրաման: Չի բերվել և ոչ մի պատճառ կամ որևէ մեղադրանք, որ Անգորայի կենտրոնական կառավարությունը պարտավոր էր նրան ներկայացնել, չի տրվել նրան պատասխանելու ոչ մի հնարավոր

րություն: Մի քանի շաբաթ անց, Անատոլիայում գործող մեր կազմակերպության բոլոր կայաններին արձակվել է հրաման, որում սահմանվել են այն պայմանները, որոնցով պետք է առաջնորդվեին ամերիկացիներն իրենց հետագա աշխատանքում: Ըստ դրանց՝ յուրաքանչյուր միավորին կից նշանակվում էր հանձնակատար, որը պետք է կատարեր կապի սպայի պարտականությունները: Ամերիկացիների աշխատանքին աջակցելու սկզբնական մտադրության փոխարեն, Խարբերդում նշանակված հանձնակատարը մեզ համար շատ խոչընդոտներ հարուցեց ու փորձեց մեր ունեցած փողն ու պաշարներն ուղղել այն միջոցառումներին, որոնցից ինքն ու տեղական այլ պաշտոնյաները կարողանային օգուտ քաղել:

Խարբերդում կառավարությունը թուրքական դպրոցների համար զավթել է Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] որբանոցների մի քանի շենք, ու մեծ ճնշում է գործադրվել, որպեսզի մենք ստանձնենք կառավարական կառույցների լայնածավալ նորոգումներ: Վերջինները նրանք մտադիր էին օգտագործել որպես աղջիկների ուսման համար արդյունաբերական դպրոց: Սպառնալիքների ներքո, ՄԱԱՕԿ-ը ստիպված էր այնթապցի մահմեդական գաղթականներին բաշխել 19.000 թուրքական լիրա թղթադրամ, թեև այդ գաղթականներից շատերը այն պահին բացարձակապես աղքատ կամ չքավոր չէին: Իրականում, ըստ մեզ հասած տեղեկությունների, դրանը հիմնականում գրպանել են թուրքական պաշտոնյաներն ու բաշխումներին օգնողները: Կառավարությունը պահանջում էր հավասարաչափ օգնություն տալ մահմեդական և ոչ մահմեդական տարրին՝ անտեսելով յուրաքանչյուրի կարիքները: Դրան հաջորդեց ռազմական նպատակով Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] սեփականության հետագա բռնագրավումն, ու մեզանից հաճախ պահանջում էին փոխադրամիջոցներ կամ աշխատանք կատարել մեր որբանոցների գործանոցներում: Խարբերդի ռազմական հրամանատարը չորս ամիս շարունակ իր համար էր բանեցնում ՄԱԱՕԿ-ի բեռնատարը՝ տեղափոխելով իր ընտանիքը Ադալիայից Խարբերդ, ինչը մեզ վրա նստեց 2.000 դոլար գումար, և որից ոչ մի դուռուչ չի վճարվել: Այսպես, մի քանի առիթով Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] մեքենաները բանեցվել են՝ օգնելով Սեբաստիա ռազմամթերք հասցնելու: Կառավարական ծառայողներից շատերն անձնապես այնքան շահ են ստացել, որ թուրքական համայնքի լավագույն խավերը՝ հօգուտ մեզ դիմել են Անգորայի իշխանությունը, և որոշ ժամանակ մեզ հետ ավելի լավ էին վարվում: 1921թ. մայիսին տեղական թերթում հայտնվել են Մանուրեթ ու Ազիզի նահանգապետի քարտուղարի գրած հոդվածները, որոնք փնովում էին ամերիկացիների աշխատանքը: ...Թեև կառավարության, մեր գործունեության վրա հարձակվելու միակ արդյունքը՝ մահմեդական ավելի պահպանողական հատվածի մեզ աջակցություն ցույց տալը եղավ:

1921-ի հունիսի կողմերը, հայ աղջիկների հետ աշխատելու և նրանց ՄԱԱՕԿ-ի որբանոցն ընդունելու պատճառով փորձ արվեց երկրից հեռացնել դր.Ռուբ Պարմելիին, սակայն նրան պաշտպանող որոշ թուրք պաշտոնյաների և իսլամասեր տիկնանց միջամտության շնորհիվ, նրան

թույլ են տվել վերադառնալ: Այնուամենայնիվ, մեկ ամիս հետո մեր տնօրենից հարցնում են նախկինում քարոզիչ եղած անձանց անունները: Նա էլ տվել է դր.Ռուֆ Պարմելիի, դր.Մարկ Յ.Վարդի և օրիորդ Իզաբել Յարլիի անուններն ու բացատրել, որ հիմա նրանք աշխատում էին Մերձավոր Արևելքում օգնության [կոմիտեի] ներքո և այդ կազմակերպության համար: Հոկտեմբերին իմացանք որ տեղական իշխանությունը մեր դեմ ուղղված զեկույց է ուղարկել Անգորայի կառավարությանը, սակայն ի վիճակի չէինք պարզելու՝ ինչու էին մեզ մեղադրում, և այդպես էլ երբեք հնարավորություն չենք ունեցել որևէ կերպ պատասխանելու:

Երբ ՄԱԱՕԿ-ի տնօրեն պ.Ֆ.Դ.Յովելը հրաժարվեց մեզ կամովին հեռացնել, 1922-ի հունվարին տեղական կառավարությունն արձակեց հրաման, որ դր.Ռուֆ Պարմելին և օր.Իզաբել Յարլին պետք է անհապաղ մեկնեն: Հետագայում, երբ հեղինակն ուշքի եկավ տիֆային տենդի նուպայից, նրան նույնպես տեղեկացրին, որ եթե չգնա այստեղից հոժարակամ, նրան պահակներով դուրս կհանեն: Հետևաբար, նա Դիարբեքիում միացավ միավորի տնօրեն պ. Ֆ.Դ.Յովելին, որը մեկ շաբաթ առաջ մեկնել էր պահակների հսկողության ներքո, ու 1922-ի ապրիլի 3-ին մենք միասին և ապահով հասանք Հալեպ:

Քանի որ ազգայնականները հսկում էին տեղական կառավարությունը, տեղի այն քաղաքական գործիչներն, որոնք եռանդուն մասնակցություն էին բերել 1915-1916թթ. հայերի բռնազաղթին ու կոտորածներին, հետզհետե վերադարձան իշխանության:

Անցյալ տարի Մամուրեթ ուլ Ազիզ նահանգի կառավարությունը գտնվում էր ազգային պաշտպանության կոմիտեի ձեռքում՝ մի կազմակերպության, որը հաստատված է Անատոլիայի բոլոր նահանգներում և որի շտաբակայանը Անգորայում է, իսկ նախագահը Մուստաֆա Քեմալ փաշան է: Ոչ նահանգապետն, ոչ էլ նահանգի ցանկացած այլ պաշտոնյա չեն կարող որևէ բան անել առանց այդ կոմիտեի համաձայնության: Նրանք զեկուցում են Անգորա այս պաշտոնյաների՝ զինվորական թե քաղաքացիական, արարքների մասին և ի վիճակի են նրանց պաշտոնանկ անել, եթե վերջիններս գործել են հակառակ իրենց կամքին:

Այդ ակունքի նախագահը քուրդ պարագլուխ Յաճի Կայան է՝ Իզոլու գյուղից. նա խոստովանում է, որ 1915թ. կոտորածների ժամանակ հենց իր ձեռքով էր սպանել բազմաթիվ ականավոր հայերի, այդ թվում՝ հայ կաթուղիկ եպիսկոպոսին, և որ ինքն ու իր մարդիկ նահանգի շուրջ 10.000 հայերի մահվան պատճառ դարձան:

Զինադադարից անմիջապես հետո դաշնակիցները նրան կանչել են Կ.Պոլիս՝ այդ արարքների համար դատական քննության, բայց ճանապարհին նա փախչել ու թաքնվել է իր գյուղում, մինչև որ ազգայնականները իրենց վարչությունն են հաստատել Սեբաստիայում: Այնուհետև նա աստիճանաբար ձեռք է բերել տեղական քաղաքական գործերում շարունակ աճող իշխանություն, ու հիմա ինքը Մամուրեթ ուլ Ազիզ նահանգի տեղական կառավարության հետևում իրական ուժ է:

Զինադադարից հետո վերադարձած հայերը ի վիճակի են եղել նորից հսկողության տակ առնել իրենց ունեցվածքը նահանգի ավելի մեծ քա-

ղաքներում, բայց գյուղերում ու նահանգի ավելի հեռավոր վայրերում նրանք այդ երեք անցած տարիների ընթացքում բնավ ի վիճակի չեն եղել ապահովել սեփականության իրենց իրավունքները կամ որևէ վարձ ստանալ այն թուրքերից, որոնք ապրում են իրենց տներում կամ մշակում հայերի դաշտերը:

Բացի այդ, վերջերս հրապարակվել է նոր հրաման, որ հայերը երկիրը թողնելու նպատակով ոչ մի տեղ իրենց գույքը վաճառելու իրավունք չունեն: Պետք է հայերին ստիպել լքել իրենց կայքը, որ այն ընկնի կառավարության ձեռքը:

Անցյալ տարի կառավարությունը սահմանափակեց ՄԱԱՕԿ-ի աշխատանքային իրավունքները: Ոչ մի որբի հնարավոր չէ որբանոց վերցնել առանց կառավարության համաձայնության, և ոչ մի հիվանդ չի ընդունվում ամերիկյան հիվանդանոց, եթե անձնապես չի ներկայանում առողջապահական գրասենյակ և այնտեղ չի ստանում սանիտարական ծառայողից փաստաթուղթ: Մենք գիտենք, որ շատ դեպքերում այդ արտոնագրերը տրվել են դրամով՝ վարչական ծառայողների ստացած կաշառքի դիմաց: Մի քանի անգամ կառավարությունը մեր որբերի սպառիչ մարդահամարներ անցկացրեց, իսկ հիմա ստացել ենք նոր հրաման, ըստ որի՝ տասնհինգ տարեկանից բարձր մեր երեխաները պետք է լքեն որբանոցը: Մեր որբերի թվում ունենք տասնհինգից մինչև քսանհինգ տարեկան հասակի հինգ հարյուրից ավելի երիտասարդ աղջիկներ, որոնք անցած երեք տարիներին փախել են թուրքական հարեմներից: Թուրք պաշտոնյաներն արձակել են սույն հրամանը՝ այդ աղջիկներին իրենց ձեռքը նորից գցելու համար: Մենք ի սկզբանե վճռական քայլեր ենք գործադրել այդ աղջիկներին վեներական այն բոլոր ախտերից, որոնցով նրանք կարող էին վարակվել թուրքերի միջավայրում լինելու ժամանակ, ձերբազատելու ուղղությամբ: Այդ ամբողջ աշխատանքը ի չիք կդառնա, եթե նրանք հարկադրաբար վերադառնան նման այլասերված կենսակերպի: Այդ աղջիկների համարյա քսանհինգ տոկոսը վարակված է եղել, ու չնայած գիտությանը հայտնի լավագույն բուժման կիրառմանը՝ չենք կարողացել բոլորին ազատել այդ նողկալի հիվանդություններից:

Անցյալ տարի Անգորայի կառավարությունը Անատոլիայով մեկ թշնամացրել է մահմեդական բնակչության վերին և առավել պահպանողական խավը: Մահմեդական հոգևորականությունը դեմ է այս կառավարությանը, քանի որ նա էությամբ կրոնասեր չէ և կրոնն օգտագործում է քաղաքական նպատակներով միայն:

Իսլամ հոգևորականությունը դասվում է ամերիկացիների՝ Խարբերդում ունեցած լավագույն ընկերների շարքին: Հայերի հետ վեց տարի առաջվա վարվեցողությունն ու հույների հետ ներկայիս դաժան վերաբերմունքը անհաղորդ են այդ մահմեդականների առավել առողջ և առավել կիրթ խավի զգացմունքներին... Մարկ Հ.Վարդ»:

ՀԱԱ, Ֆ.430, ց.1, գ.1010, ք.20-23: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

### Ծանոթագրություններ

1. «Միություն և առաջադիմություն»՝ ստեղծված երիտթուրքերի կոմիտեի կողմից:
2. Հայ կաթոլիկ եպիսկոպոս Ստեփան Իսրայելյանը ծնվել է 1866թ. փետրվարի 15-ին, Մուշ քաղաքում, աշխարհական անունը՝ Սեդրակ: Սովորել է Հռոմի Ուրբանյան վարժարանում: Արաբկիրի ժողովրդապետ էր, 1899թ. փետրվարի 6-ից Խարբերդի թեմի եպիսկոպոս: 1912թ. սեպտեմբերի 1-ին Վիենայում պատարագ է մատուցել ս.Հաղորդության ժողովի առթիվ: Սպանվել է 1915թ. հուլիսի 14-ին, Քեշիշ խանի մոտ, Դիարբեքի տանող ճանապարհի վրա՝ Գեղվանք գյուղի մերձակայքում: Հիշատակվում է նաև N° 7 փաստաթղթում: Տես. Վահե Հայկ, Եզվ.աշխ., էջ 1101-1102, 1441-1442; Թեոդիկ: Յուշարձան նահատակ մտաւորականութեան: «Նաւասարդ»-ի հրատ., թիւ 4: Երևան, 1990, էջ 110, Յովհաննես Արք. Նազլեան: Յուշերը: Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրոնական դեպքերուն մասին: Ա հատոր: Թարգմ.Հ.Ստեփանյան: Պեյրութ, Հայ կաթողիկէ տպարան, 1960, էջ 338-339: Տվյալները ճշտվել են armworkshop@umich.edu մասնագիտական խմբի և ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակից Արփինե Բաբլունյանի մասնակցությամբ:
3. Իզոզլու, Թմնիս - բերդ, գետանց և գյուղ Ծովք լճակից արևմուտք, Եփրատի ձախ ափին, հին կամրջի դիմաց: 1914թ. ուներ 280 հայ և 390 թուրք բնակիչ: Հարակիցը ս.Լուսավորչի եկեղեցին էր: Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4 հատորով, հ.2: Ե., ԵՊՀ, 1988, էջ 459-460:
4. Վահե Հայկ, Եզվ.աշխ., էջ 1442-ում տրվում է Հաճի Քահյա անվանաձևը:
5. Թարգմանված վավերագրում Խարբերդը հիմնականում օգտագործվում է Խարպութ անվանմամբ:
6. Ազատախոհի հասարակական-քաղաքական հոսանք Օսմանյան կայսրությունում:
7. Ոստիկանության պետ:
8. Գտնվում է Ջոնգուլդակից արևմուտք՝ Կ.Պոլսից 190 կմ հեռավորության վրա: //-85
9. Դիվանապետ:
10. Փաստաթղթերը ներկայացվում են այն հերթակայությամբ, ինչպես որ դրանք դասավորել է Հ.Դուլայթը, երբ ընդգրկել է Բ.Կուլբիին ներկայացվող տեղեկանքում:
11. Վավերագրերում՝ Հայկական Հանրապետությունը:
12. Հ.Դուլայթը նշել է Գ.Փաստրմաճյանի հուշագրի և այլ փաստաթղթերի՝ Պետդեպարտամենտում գրանցման համարները: Այժմ էլ դրանք նույն համարներով պահվում են ԱՄՆ-ի Ազգային արխիվի 59-րդ ֆոնդում:
13. Տե՛ս նաև ՀԱԱ ֆ.200, ց.2, գ.114, թ.1:
14. Ընդգծումները փաստաթղթին են:
15. XIV դարի ադրբեջանական 7 քոչվոր ցեղերի «կարմրագդակ»



անդամներ, իրանալեզու են, շիա Սեֆյանների հպատակներ:

16. Ֆրանսիացի հեղինակ Վիտալ Բինե, 1892թ. Փարիզում հրատարակել է «Ասիական թուրքիա: Փոքր Ասիայի բոլոր նահանգների վարչական աշխարհագրություն, նկարագրական ու հիմնավորված վիճակագրություն» երկհատորյակը, որի վիճակագրական տվյալները թուրքիայում ընդունվում էին որպես խիստ հավաստի: Տես. Vital Cuinet, La Turquie d'Asie. Géographie administrative, statistique descriptive et raisonnée de chaque province de l'Asie Mineure, 2 vols. Paris, 1892:

17. Վավերագրում նշվել է երկու անվանում՝ Մամուրեթ ու Ազիզ (Սեզիրե):

18. Փաստաթղթում՝ Կարա-սու՝ Սև ջուրը:

19. Ինչին ավելանում էր ևս մեկ հանգամանք՝ զեկուցագիրը ներկայացնելու պահին (1920թ. նոյեմբերի 11-ին) ՀՀ-ում տիրում էր պատերազմական ծանր իրավիճակ:

20. Այժմ՝ Անկարա:

21. Վավերագրում ունի էզին անվանաձևը:

22. Է.Ալենի օգնականը Անգորայում:

23. Սխալմամբ նշվել է որպես Հեքին Հեն:

24. Փաստաթղթում՝ Սվազ:

25. Իրականում՝ հունվարի 28-ին:

26. Ավելի ճիշտ՝ փետրվարի 2-ին:

27. Կարմիր գույնով շարվածքը չի ներառվել «Հայաստանի արխիվների բանբերի» հոդվածում:

28. Իջևանատուն:

29. Խարբերդում օտարերկրյա քարոզիչներին «պրոդ» էին անվանում:

30. Ցածր գներով սպասարկվող ճաշարան:

31. Այդ գնումները անում էր Հենրի Ռիզզը: //-86

©

25 էջ

«Բանբեր Հայաստանի արխիվների»: Երևան, 2008, N° 2, (112), էջ 75-86: